Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Օպերատիվ-հետախուզական գործունեություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Մ. Սեմերջյան E-mail: manuksemerghyan@mail.ru, հեռ 094-06-20-80
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	3-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	5 (հինգ)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ	«Օպերատիվ-հետախուզական գործունեություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 150 ժամ, որից 48 ժամ դասախոսություն, 22 ժամ սեմինար, 10 ժամ գործնական, 70 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երեք անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», «Մասնագիտական ներածություն և գաղտնիության ռեժիմ», «Քրեաբանություն» և «Կրիմինալիստիկա» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Օպերատիվ-հետախուզական գործունեություն 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, առարկան, համակարգը, նպատակները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, անցկացման կարգը, փաստաթղթավորումը, գաղտնի հիմունքներով համագործակցության աշխատանքները, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցությունը:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացության, առարկայի, համակարգի, խնդիրների, սկզբունքների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակների, անցկացման կարգի, փաստաթղթավորման, գաղտնի հիմունքներով համագործակցության աշխատանքների, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցության վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, 2) ներկայացնել օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները, 3) ներկայացնել օպերատիվ-մարտավարական հմտությունները, 4) ներկայացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, դրանց անցկացման վերաբերյալ պատճառաբանված միջնորդությունները, որոշումները և ձևաթղթերի պատրաստման կարգը, 5) ներկայացնել ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցության աշխատանքների և այդ աշխատանքներում ձևաթղթերի պատրաստման կարգը, 6) ներկայացնել հաշվառման գործերի կազմման, հաշվառման, վարման և դադարեցման կարգը, 7) ներկայացնել օպերատիվ մշակման առանձնահատկությունները, 8) ներկայացնել օպերատիվ մշակման նյութերի իրացման առանձնահատկությունները, 9) ներկայացնել օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցության ճանապարհները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) սահմանել օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, նպատակները, 2) ամբողջությամբ թվարկել և բացատրել օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները, 3) թվարկել և սահմանել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները և նրանց յուրաքանչյուրի խնդիրները, 4) ներկայացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումները, դրանց իրականացման ընթացակարգին առաջադրվող բոլոր պահանջները, 5) ներկայացնել գաղտնի հիմունքներով համագործակցության աշխատանքներին ներկայացվող բոլոր պահանջները, 6) ներկայացնել հաշվառման գործերի կազմանը և դադարեցմանը ներկայացվող բոլոր պահանջները:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1) ՀՀ Սահմանադրությունը, 1995թ. (2005թ. փոփ.), 2) ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, 1998թ., 3) ՀՀ մաքսային օրենսգիրքը, 2000թ., 4) ՀՀ քրեական օրենսգիրքը, 2003թ., 5) «Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենքը, 1996թ., 6) «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը, 1996թ., 7) «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, 2001թ., 8) «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքը, 2001թ., 9) «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2001թ., 10) «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2002թ.,

		11) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, 2002թ., 12) «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2003թ., 13) «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, 2007թ., 14) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2007թ.:
Լրացուցիչ		1) ՀՀ կառավարության 18.12.2003թ. թիվ 1745-ն որոշումը, 2) ՀՀ կառավարության 23.06.2011 թվականի թիվ 857-ՆԳ որոշումը, 3) ՀՀ կառավարության 31.07.2008 թ. թիվ 810-Ն որոշումը, 4) ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշումը, 5) ՀՀ ՆԳՆ 1996թ. թիվ 633 հրամանը, 6) ՀՀ ՆԳՆ 1996թ. թիվ 028 հրամանը, 7) ՀՀ ոստիկանության պետի 30.08.2010թ. թիվ 2-ՆՀԳ հրամանը, 8) ՀՀ ոստիկանության պետի 06.10.2010թ. թիվ 3-ՆՀԳ հրամանը, 9) ՀՀ ոստիկանության պետի 13.07.2011թ. թիվ 1830-Ա հրամանը, 10) ՀՀ ոստիկանության պետի 17.02.2012թ. թիվ 36-ԱԳ հրամանը, 11) ՀՀ ոստիկանության պետի 01.07.2020թ. թիվ 1-ԼՀԳ հրաման 12) Վ.Գ.Ենգիբարյան «Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը» ք.Երևան 2016թ. 13) Ա.Հովհաննիսյան, Մ.Սեմերջյան Օպերատիվ հետախուզական գործունեություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան 2012:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ գնահատման ձևը քննություն	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
		18-20	գերազանց
		13-17	լավ
		8-12	բավարար
		0-7	անբավարար
		0	չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Դասընթացի ընթացքում սովորողների գիտելիքներն ու ունակությունները գնահատվում են 20 բալանոց համակարգով: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց	

		չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Օպերատիվ-հետախուզական գործունեության էությունը և նշանակությունը** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ-հետախուզական գործունեության էությունը, հասկացությունը, նշանակությունը և դերը հանցավորության հակազդման ոլորտում: 2) Օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները: 3) Օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական հիմքերը:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարց 3 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 2 **Օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները: 2) Ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, որպես օպերատիվ-հետախուզական գործունեության ուժեր:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 3 **Օպերատիվ-հետախուզական գործունեության միջոցները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ-հետախուզական գործունեության միջոցները: 2) Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 Սեմինար պարապմունք:

Թեմա 4 **Օպերատիվ-հետախուզական միջոցառումները** **(10 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հասկացությունը և նշանակությունը: 2) Օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները: 3) Դատարանի որոշման հիման վրա անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները: 4) Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու համար թույլտվություն ստանալու վերաբերյալ պատճառաբանված միջնորդությունը և դրա քննարկման կարգը:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-4 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարց 4 դասախոսի օգնությամբ սովորողները կազմում են ՕՀՄ-ի անցկացման համար նախատեսված միջնորդության և որոշման ձևերը:

Թեմա 5 **Ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցության աշխատանքները** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցության աշխատանքի էությունը և նշանակությունը հանցավորու-	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն:

թյան դեմ տարվող պայքարում: 2) Համագործակցության աշխատանքի նպատակները: 3) Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի թեկնածուի հավաքագրման փուլերը: 4) Համագործակցող անձի փաստաթղթային ձևակերպումը և հաշվառումը:	Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարց 4 սովորողները դասախոսի օգնությամբ լրացնում են նախատեսված ձևաթղթերը:

Թեմա 6 **Կապը գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց հետ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի հետ կապի հասկացությունը և դրան ներկայացվող պահանջները, հերթական, արտահերթ և ստուգողական հանդիպումները: 2) Գաղտնի հիմունքներով համագործակցող անձից ստացված տեղեկությունների ձևակերպումը հաշվառումը, ստուգումը և օգտագործումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 1 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարց 2 Դասախոսի օգնությամբ լրացնում են նախատեսված ձևաթղթերը:

Թեմա 7 **Համագործակցության դադարեցումը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Համագործակցության դադարեցման հիմքերը և կարգը: 2) Գաղտնի համագործակցության դադարեցման մասին եզրակացությունը և համագործակցության վերականգնման կարգը:	Հարց 1 անցկացվում է դասախոսություն: Հարց 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարցեր 1-2 Դասախոսի օգնությամբ լրացնում են նախատեսված ձևաթղթերը:

Թեմա 8 **Օպերատիվ որոնում: ՆՕՍԳ** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ որոնման հասկացությունը և ուղղությունները, օպերատիվ որոնման արդյունքների փաստաթղթավորումը: 2) Նախնական օպերատիվ ստուգման գործի կազմման, վարման և դադարեցման կարգը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 9 **Օպերատիվ մշակում** **(8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ հաշվառման հասկացությունը և էությունը, օպերատիվ մշակման գործերի տեսակները: 2) Օպերատիվ հաշվառման գործերի կազմումը, վարումը և դադարեցումը, օպերատիվ մշակման գործերի միացման կարգը, օպերատիվ հաշվառման գործերի և դրանցով մշակվող անձանց հաշվառումը և գրանցումը, օպերատիվ մշակումը համագործակցող անձով ապահովելու էությունը, խնդիրները և եղանակները: 3) Ներխցիկային մշակում:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարց 2 սովորողները դասախոսի օգնությամբ լրացնում են նախատեսված ձևաթղթերը:
Թեմա 10 **Օպերատիվ մշակման գործերով միջոցառումների պլանավորումը և օպերատիվ կոմբինացիաներ** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1) Օպերատիվ հաշվառման գործերով միջոցառումների պլանավորման էությունը, նշանակությունը: 2) Օպերատիվ կոմբինացիան որպես օպերատիվ-մարտավարական հնարք, հասկացությունը և տարրերը: Օպերատիվ կոմբինացիայի և հանցագործության սադրանքի սահմանազատումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարց 2 Դասախոսի օգնությամբ լրացնում են նախատեսված ձևաթղթերը:

Թեմա 11 Օպերատիվ մշակման գործերով նյութերի իրացումը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ մշակման նյութերի իրացումը: 2) Մշակվող անձանց հանցավոր գործողությունների փաստաթղթավորումը: 3) Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի դուրս բերումը օպերատիվ մշակումից:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 12 Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցությունը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Հանցագործությունների քննության ընթացքում հետաքննության մարմինների (օպերատիվ ծառայողների) հետ փոխգործողության կազմակերպման հիմքերն ու առանձնահատկությունները: 2) Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում ստացված տեղեկությունները վարույթ իրականացնող մարմնին փոխանցելու կարգը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարց 2 սովորողները լրացնում է նախատեսված ձևաթղթերը:

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 3-րդ կուրսի սովորողների «Օպերատիվ-հետախուզական գործունեություն» առարկայի քննության

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության էությունը, հասկացությունը, նշանակությունը, հանցավորության հակազդման ոլորտում:
2. Օպերատիվ-հետախուզական գործունեության դերը, բնութագրական հատկանիշները և նպատակները:
3. Օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները, իրավական հիմքերը:
4. Ոստիկանությունում ամբողջ ծավալով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումները և աշխատակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները:
5. Ամբողջ ծավալով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներին օժանդակող ստորաբաժանումները:
6. Ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, նրանց տեսակները և դերը հանցավորության դեմ տարվող պայքարում:
7. Օպերատիվ հաշվառումները և նրանց ներկայացվող պահանջները:
8. Օպերատիվ հաշվառումների տեսակները և դրանցից օգտվելու կարգը:
9. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում օգտագործվող հատուկ և այլ տեխնիկական միջոցները: Հատուկ տեխնիկական միջոցների օգտագործման առանձնահատկությունները:
10. Հետախուզական շները, որպես օպերատիվ-հետախուզական գործունեության միջոց:
11. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հասկացությունը, նշանակությունը և տեսակները:
12. Օպերատիվ հարցում օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, իրականացման եղանակները, օբյեկտները, սուբյեկտները:
13. «Օպերատիվ հարցում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման տակտիկան և արդյունքների փաստաթղթավորումը:
14. «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտնեը և սուբյեկտները:
15. «Համեմատական հետազոտումների նմուշների հավաքում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, տեսակները, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
16. «Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, տեսակները, օբյեկտները, սուբյեկտները:
17. «Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման տակտիկան և արդյունքների փաստաթղթավորումը:
18. «Իրերի և փաստաթղթերի հետազոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, տեսակները, օբյեկտները և սուբյեկտները:
19. «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
20. «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
21. «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ժամանակ օպերատիվ աշխատակցի և օպերատիվ-փնտրողական վարչության փոխհամագործակցությունը:
22. «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ժամանակ օպերատիվ աշխատակցի և օպերատիվ-փնտրողական վարչության փոխհամագործակցությունը:
23. «Անձի նույնացում» օպերատիվ հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:

24. «Շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, տեսակները, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
25. «Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
26. «Հեռախուսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
27. «Օպերատիվ ներդրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
28. «Օպերատիվ փորձարարություն» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
29. «Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
30. «Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման հասկացությունը, էությունը, խնդիրները, օբյեկտները և սուբյեկտները:
31. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման հիմքերը և օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը և դրա քննարկման կարգը:
32. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշմանը ներկայացվող պահանջները և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետները:
33. Գաղտնի համագործակցության աշխատանքի էությունը և նշանակությունը հանցավորության դեմ տարվող պայքարում:
34. Համագործակցության աշխատանքի սկզբունքները:
35. Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի հավաքագրման փուլերը և համագործակցող անձին ներկայացվող պահանջները:
36. Համագործակցող անձի թեկնածուի ընտրումը, ստուգումը, ուսումնասիրումը:
37. Համագործակցող անձի թեկնածուի հետ հավաքագրման զրույցի անցկացումը, փաստատղթային ձևակերպումը և հաշվառումը:
38. Խմբավարի թեկնածուի ընտրումը, ստուգումը, ուսումնասիրումը:
39. Խմբավարի թեկնածուի հետ հավաքագրման զրույցի անցկացումը, փաստատղթային ձևակերպումը և հաշվառումը:
40. Տեսակցասենյակ պահողի թեկնածուի ընտրումը, ստուգումը, ուսումնասիրումը:
41. Տեսակցասենյակ պահողի թեկնածուի հետ հավաքագրման զրույցի անցկացումը, փաստաթղթային ձևակերպումը և հաշվառումը:
42. Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի հետ կապի հասկացությունը, կապին ներկայացվող պահանջները:
43. Գաղտնի հիմունքներով համագործակցող անձից ստացված տեղեկությունների ձևակերպումը, հաշվառումը և օգտագործման կարգը:
44. Համագործակցության դադարեցման հիմքերը, դադարեցման կարգը, փաստաթղթային ձևակերպումը:
45. Աստիճանական և նպատակային հավաքագրման առանձնահատկությունները:
46. Օպերատիվ որոնման հասկացությունը, որոնման ուղղությունները և փաստաթղթավորումը:
47. Նախնական օպերատիվ ստուգման գործի կազմման, վարման և դադարեցման կարգը:
48. Օպերատիվ մշակման հասկացությունը և էությունը:
49. Օպերատիվ գործի կազմումը, հաշվառումը, վարումը և դադարեցումը:
50. Օպերատիվ փնտրողական գործի կազմումը, հաշվառումը, վարումը և դադարեցումը:
51. Օպերատիվ փնտրողական քարտ կուտակիչի կազմումը, հաշվառումը, վարումը և դադարեցումը:

52. Օպերատիվ դիտարկման գործի կազմումը, հաշվառումը, վարումը և դադարեցումը:
53. Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի ներդրումը մշակման մեջ:
54. Օպերատիվ մշակման գործերով միջոցառումների պլանավորման էությունը և նշանակությունը:
55. Օպերատիվ մշակման գործերով միջոցառումների պլանների տեսակները և կառուցվածքը:
56. Օպերատիվ կոմբինացիաները, որպես օպերատիվ մշակման խնդիրների լուծման հնարք:
57. Օպերատիվ մշակման նյութերի իրացման հասկացությունը, կազմակերպումը և տակտիկան:
58. Մշակման գործերով մշակվող անձանց հանցավոր գործողությունների փաստաթղթավորումը:
59. Գաղտնի հիմունքներով համագործակցող անձի դուրս բերումը օպերատիվ մշակումից:
60. Ձերբակալված անձանց ներխցիկային մշակումը:
61. Կապը ներխցիկային մշակում իրականացնող համագործակցող անձի հետ և նրա վարքագծի մշակումը:
62. Ներխցիկային մշակման արդյունքների ձևակերպման և օգտագործման կարգը:

Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Օպերատիվ-հետախուզական գործունեություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Մ. Սեմերջյան E-mail: manuksemerghyan@mail.ru, հեռ 094-06-20-80
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**3 (երեք)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ		«Օպերատիվ-հետախուզական գործունեություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար, 8 ժամ գործնական, 42 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ընթացիկ ստուգմամբ հարց ու պատասխանի միջոցով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», «Մասնագիտական ներածություն և գաղտնիության ռեժիմ», «Քրեաբանություն» և «Կրիմինալիստիկա» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Օպերատիվ-հետախուզական գործունեություն 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են օպերատիվ սպասարկման հասկացությունը, սպասարկման եղանակները, հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելման և բացահայտման տակտիկական հնարքները, առանձին հանցատեսակների օպերատիվ-հետախուզական կանխարգելման և բացահայտման աշխատանքները:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ օպերատիվ սպասարկման հասկացության, սպասարկման եղանակների, հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելման և բացահայտման տակտիկական հնարքների, առանձին հանցատեսակների օպերատիվ-հետախուզական կանխարգելման և բացահայտման աշխատանքների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ուսումնասիրել օպերատիվ սպասարկման կազմակերպման աշխատանքները, 2) ներկայացնել օպերատիվ սպասարկման եղանակները, 3) ներկայացնել հանցագործությունների օպերատիվ-հետախուզական բնույթի կանխարգելման էությունը, 4) ներկայացնել ընդհանուր և անհատական բնույթի օպերատիվ-հետախուզական կանխարգելման յուրահատկությունները, 5) ներկայացնել հանցագործությունների բացահայտման կազմակերպչական և տակտիկական հնարքները, 6) ներկայացնել առանձին հանցատեսակների օպերատիվ-հետախուզական կանխարգելման և բացահայտման աշխատանքների յուրահատկությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) սահմանել օպերատիվ սպասարկման հասկացությունը, 2) ներկայացել օպերատիվ-հետախուզական կանխարգելման աշխատանքները, 3) ներկայացնել օպերատիվ-հետախուզական անհատական և ընդհանուր բնույթի կանխարգելման աշխատանքները, 4) ներկայացնել հանցագործությունների բացահայտման տակտիկական հնարքները, 5) ներկայացնել առանձին հանցատեսակների բացահայտման աշխատանքները:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1) Ա.Հովհաննիսյան, Մ.Սեմերջյան Օպերատիվ հետախուզական գործունեություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան 2012 2)ՀՀ կառավարության 23.06.2011 թվականի թիվ 857-ՆԳ որոշում, 3)ՀՀ կառավարության 31.07.2008 թ. թիվ 810-Ն որոշում, 4)ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշում, 5)ՀՀ ՆԳՆ 1996թ. թիվ 633 հրաման, 6)ՀՀ ՆԳՆ 1996թ. թիվ 028 հրաման, 7)ՀՀ ոստիկանության պետի 30.08.2010թ. թիվ 2-ՆՀԳ հրաման, 8)ՀՀ ոստիկանության պետի 06.10.2010թ. թիվ 3-ՆՀԳ հրաման, 9)ՀՀ ոստիկանության պետի 13.07.2011թ. թիվ 1830-Ա հրաման, 10)ՀՀ ոստիկանության պետի 17.02.2012թ. թիվ 36-ԱԳ հրաման 11) ՀՀ ոստիկանության պետի 01.07.2020թ. թիվ 1-ԼՀԳ հրաման

Լրացուցիչ		1) Мешеряков А.Н., Тарсуков К.М. Предупреждение и раскрытие квартирных краж (материалы к лекции) Москва 1986, 2) А.П. Титов Оперативная установка Москва 1984, 3) В.К.Шульц Тактические особенности предупреждения замышляемых преступлений Москва 1984, 4) Л.К.Калинкович Организация и тактика раскрытия уличных разбоев и грабежей.Омск 1982, 5) Б.П. Оперативно-розыскная тактика и организация раскрытия краж, грабежей, разбойных нападений и мошеничеств.Смагоринский Минск 1986,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգում հարց ու պատասխանի միջոցով	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Դասընթացի ընթացքում սովորողների գիտելիքներն ու ունակությունները գնահատվում են 20 բալանոց համակարգով: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:	

Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

Թեմա 13 **Օպերատիվ սպասարկում** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Օպերատիվ սպասարկման ընթացքում քրեական հետախուզության մարմինների խնդիրները: 2) Օպերատիվ սպասարկման ձևերը (տեսակները):	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 14 **Հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելման էությունը (հասկացությունը) և նշանակությունը: 2) Հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելման կազմակերպումը և ուղղությունները: 3) Հանցագործության հակում ունեցող անձանց հայտնաբերումն ու նրանց նկատմամբ անհատական կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 15 **Հանցագործությունների բացահայտման տակտիկական հնարքները** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Հանցագործությունների բացահայտման էությունը: 2) Հանցագործությունների բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական և հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք: Սովորողները ուսումնասիրում են հանցագործությունների բացահայտման աշխատանքներին վերաբերողգրականությունը:

Թեմա 16 **Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը և բացահայտումը** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Սպանության և ծանր մարմնական վնասվածքի օպերատիվ-հետախուզական բնութագիրը և օպերատիվ-հետախուզական կանխարգելումը: 2) Սպանության և առողջությանը ծանր վնաս հասցնելու բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 17 **Սեռական անձեռնամխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը և բացահայտումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսու-

բնութագիրը և օպերատիվ-կանխարգելումը: 2) Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական և հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	թյուն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանքի ժամանակ սովորողները ուսումնասիրում են համապատասխան գրականություն: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 18 **Ավազակային հարձակումների և կողոպուտների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը և բացահայտումը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ավազակության և կողոպուտի բնութագիրը և օպերատիվ-հետախուզական կանխարգելումը: 2) Ավազակության և կողոպուտի բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական և հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանքի ժամանակ սովորողները ուսումնասիրում են համապատասխան գրականություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարցեր 1-2 դասախոսի օգնությամբ սովորողները լուծում են խնդիրներ գործնական հմտությունները ամրապնդելու համար:

Թեմա 19 **Գողությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը և բացահայտումը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Գողության բնութագիրը և օպերատիվ-հետախուզական կանխարգելման յուրահատկությունները: 2) Գողության բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական և հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանքի ժամանակ սովորողները ուսումնասիրում են համապատասխան գրականություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարցեր 1-2 դասախոսի օգնությամբ սովորողները լուծում են խնդիրներ գործնական հմտությունները ամրապնդելու համար:

Թեմա 20 **Ավտոտրանսպորտային միջոցների գողությունների և առևանգումների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը և բացահայտումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ավտոտրանսպորտային միջոցների գողության և առևանգման բնութագիրը և օպերատիվ-հետախուզական կանխարգելումը: 2) Ավտոտրանսպորտային միջոցների գողության և առևանգման բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական և հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանքի ժամանակ սովորողները ուսումնասիրում են համապատասխան գրականություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք: Հարցեր 1-2 դասախոսի օգնությամբ սո-

	վորողները լուծում են խնդիրներ գործնական հմտությունները ամրապնդելու համար:

Թեմա 21 **Թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների օպերատիվ-հետախուզական կանխարգելումը և բացահայտումը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բնութագիրը և օպերատիվ-հետախուզական կանխարգելումը: 2) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման ուղղությամբ իրականացվող նախնական և հետագա օպերատիվ-հետախուզական միջոցառումները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանքի ժամանակ սովորողները ուսումնասիրում են համապատասխան գրականություն: Հարցեր 1-2 դասախոսի օգնությամբ սովորողները լուծում են խնդիրներ գործնական հմտությունները ամրապնդելու համար: